

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոտայքյոշ ԲԲԸ-ն ԵԱՍՄ-ԵԱՃԱՊԶԲ-25/47 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	Ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Կոտայքյոշ	Կոտայքյոշ ԲԲԸ	Աշխատանքային համազգեստի լրակազմը բաղկացած է աշխատանքային բաճկոնից (թվով 1 հատ), տաբատից (թվով 2 հատ), կեպիից (թվով 1 հատ), կարճաթև շապիկից (թվով 2 հատ): Չափսերը՝ /48-64 չափսի/ Բաճկոնը, տաբատը կարվում է երկու գույնի կտորների համադրությամբ՝ մուգ կապույտ և դեղին: Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված կողերից: Բոլոր կտորների գործվածքների տեսակը «Գրետա» է, իսկ ներկման մեթոդը՝ «Ռեակտիվ» մշակված անջրաթափանց ծածկույթով: Մուգ կապույտ կտորների գործվածքի մակերեսային խտությունը առնվազն 210 գրամ/մ2, բաղադրությունը՝ 51 ± 2% բամբակ, 49 ± 2% պոլիէսթեր, դեղին կտորների գործվածքի մակերեսային խտությունը առնվազն 210 գրամ/մ2, բաղադրությունը՝ 51 ± 2% բամբակ, 49 ± 2% պոլիէսթեր: Բաճկոնի ձևվածքն ուղիղ ուրվագծով է: Առաջամասը մշակվում է ձևավոր, մի քանի կտորանի կոկետկայով: Հիմնական գույնը մուգ կապույտն է: Բաճկոնի բոլոր միացման կարերը մշակված են 5 թելանի մեքենայով: Թևատեղերը և ուսի կարերը մշակվում են զույգ կարերով: Կոկետկայի եզրերը մշակվում են

կանտով, որը մշակվում է հատուկ թելով (3մմ): Կանտից վերև տեղադրվում են 3սմ լայնությամբ 2 հատ լուսանդրադարձնող ժապավեններ: Լուսանդրադարձնող ժապավենների հիմքը 30% բամբակ և 70% պոլիէսթեր է Լուսանդրադարձնող ժապավենների լուսանդրադարձման գործակիցը 60°C ջերմաստիճանով 40 ցիկլ լինելուց հետո չպետք է պակաս լինի նախնական լուսանջրադարձման գործակցի 90%-ից: Մեջքի ամբողջ երկայնքով ուսից 10-11սմ ներքև տեղադրված է երկու հատ լուսանդրադարձնող ժապավեն: Բաճկոնը երկլանջ ծալովի օձիքով է: Օձիքի վրա պիտակ՝ տեսականու չափսի մասին նշումով: Թևքերը՝ ներկարված են, դաստակի հատվածում 4 սմ լայնությամբ մանժետով, որը կոճկվում է մեկ օղակ կոճակով: Մանժետի եզրից 18սմ վերև տեղադրված է երկու հատ լուսանդրադարձնող ժապավեն: Բաճկոնը կոճկվում է սև գույնի 22 մմ տրամագծով կոճակներով (7կոճակ): Բաճկոնի ներքևի կողային հատվածում առկա է երկու վրադիր գրպան: Գրպանների մուտքի ձևածքը շեղ է, մուտքի հատվածը մշակված է 3սմ լայնությամբ երիզներով: Կողային վրադիր գրպանների մուտքը 18 սմ լայնությամբ է: Երիզի տակ տեղադրված է թելով մշակված 3մմ լայնությամբ դեղին կանտ: Բոլոր գրպանների գաղտնակարերը արված են զույգ կարով: Կրծքավանդակի աջ հատվածում տեղադրված է վրադիր գրպան, որը փակվում է դեղին գույնի կափույրով: Գրպանը փակվում է կաչունային փականով: Կրծքավանդակի ձախ հատվածում տեղադրված է մեկ վրադիր գրպան: Գրպանները փակվում են ձևավոր կափույրով: Բոլոր գրպանների մուտքերը ունեն 1սմ երկարությամբ հատուկ ամրակարեր: Բաճկոնի փեշը մշակված է 4սմ լայնությամբ մանժետով: Կողային հատվածներում տեղադրված են 3-4սմ լայնությամբ էլաստիկ ժապավեններ: Բաճկոնի մեջքի մասում պետք է ասեղնագործված լինի հիմնարկի հապավումը՝ ԵԱՍՄ կամ Երևան քաղաքի վարչական շրջաններից որևէ մեկի անվանումը, կրծքավանդակի ձախակողմյան գրպանի վրա՝ ասեղնագործման եղակակով տեղադրվում է հիմնարկի անվանումը՝ ԵԱՍՄ, իսկ աջակողմյան գրպանի վրա ասեղնագործման

եղակակով Երևան քաղաքի գինանշանը: Տաքատը ուղիղ ձևվածքի է: Հիմնական գույնը մուգ կապույտն է: Տաքատն առջևից ունի 2 կողային գրպաններ, և մեկ գրպան հետնամասում ծնկից վերև: Կողային վրադիր գրպանների մուտքի ձևածքը շեղ է, մուտքի հատվածը մշակված է նեղ երիզով և կանտով: Բոլոր գրպանների մուտքերն ունեն 1սմ երկարությամբ և 2մմ լայնությամբ ամրակարեր: Տաքատի կողային և գրպանի կարերը կարված են զույգ կարերով: Տաքատի գոտին 4 սմ լայնությամբ է, որի վրա կա 6 կամրջակ՝ գոտին անցկացնելու համար: Առաջամասը կոճկվում է նեյլոնե շղթայով և 22մմ տրամագծով կոճակով: Տաքատի գոտու մեջ տեղադրված է 3.5 - 4 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ շիբետանման ռեզին՝ նախատեսված տաքատի չափսն կարգավորելու համար: Տաքատի ծնկամասերից ներքև տեղադրված են 3 սմ լայնությամբ երկու հատ լուսանդրադարձնող ժապավեններ, Լուսանդրադարձնող ժապավենների հիմքը 30% բամբակ և 70% պոլեսթեր է: Լուսանդրադարձնող ժապավենների լուսատանդրադարձման գործակիցը 60°C ջերմաստիճանով 40 ցիկլ լվանալուց հետո չափեք է պակաս լինի նախնական լուսանդրադարձման գործակցի 90%-ից: Կեպին կարվում է մուգ կապույտ գույնի կտորից, ներսի մասում ինքնաստոսնձվող ոչ գործվածքային կտորից, ուժեղացված գլխարկահովհարով, դիմային հատվածում ասեղնագործման եղակակով տեղադրվում է հիմնարկի հապավումը՝ ԵԱՍՄ: Շապիկը կարված է 150 գ/մ2 մակերեսային խտությամբ բարձրորակ կտորից, Գործվածքի բաղադրությունը 100% բամբակ: Շապիկը կարճաթև է, վզի կլոր բացվածքով, կլոր օձիքը բարձրորակ պենյա Ռիբանա կտորե գործվածքից: Գծային չափերի փոփոխությունը լվանալուց հետո չափեք է գերազանցի 2%: Կտորի հիմնական գույնը մուգ կապույտ է, պարտադիր Phanton կատալոգի պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված կողերից: Թելը, որից կարվելու են շապիկները 100 % բամբակյա բարձր որակի: Շապիկի մեջքի մասում բարձրորակ տպագրական ներկով դաջվում է հիմնարկի հապավումը՝ ԵԱՍՄ, կամ Երևան քաղաքի որևէ վարչական շրջանի

			անվանումը, կրծքավանդակի ձախակողմյան հատվածում՝ դաջման եղակակով տեղադրվում է հիմնարկի հապավումը: Շապիկի մեջքամասի վերին եզրի կարի տակից կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը կատարվում է թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով: Տոպրակները պիտակավորված են, որոնց վրա նշված է տեսականու չափսը, անվանումը, քանակը: Չափսերը և քանակները նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Չափսերի նմուշային օրինակները տրամադրվում է մատակարարի կողմի, որի հիման վրա իրականացվում է չափսերի տրամադրումը ըստ անհրաժեշտ քանակների: Ապրանքը պետք է լինի նոր չօգտագործված: Ապրանքի մատակարարումը և բեռնաթափումը կատարում է մատակարարը իր հաշվին:
--	--	--	--

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ОАО Котайккош в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом БЦУУ-БЦХЦՊԶԲ-25/47 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
1			